Հետազոտական աշխատանք

Անգլերեն

Թեմա- օտար լեզվի ուսուցման մոտեցումները և մեթոդները

Կազմեց՝ Կարինե Նորիկի Պողոսյան

Քաջարանի թիվ 2 միջն. դպրոց

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն

Պարագրաֆ 1- Ուղղակի մոտեցում

Պարագրաֆ 2- Քերականության կարևորությունը լեզվի ուսուցման գործում

Պարագրաֆ 3- Անգլերենի ուսուցման ժամանակակից մոտեցումները

Պարագրաֆ 4- Անգլերենի ուսուցման մոտեցումները նախնական փուլում

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Դասի պլան

Ներածություն

Արդի աշխարհում խիստ կարևորվում է օտար լեզվի՝ հատկապես անգլերենի իմացությունը, որը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցական և համամշակութային կարողությունների ձևավորմանը:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև այլ առարկաներից, օրինակ՝ աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից, սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվի իմացությունը ընձեռնում է նաև տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ:

Օտար լեզվի ուսուցման հիմնական մոտեցումները

Կան լեզուների ուսուցման տարբեր մոտեցումներ: Դրանց ճիշտ ընտրությունից է կախված ուսուցման արդյունավետությունը: Այստեղ պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ՝ սովորողների տարիքը, լեզվի տիրապետման մակարդակը, աշխատասիրությունը և այլն:

1. Ուղղակի մոտեցում- §1

Այստեղ գերակշռում են լսելու և խոսելու գործոնները: Այս մեթոդի կիրառման ժամանակ օտար լեզուն ուսուցանելիս խոսում ենք ուսուցանվող լեզվով(տվյալ պարագայում՝ անգլերենով):

Եթե երեխան չի հասկանում ինչի մասին է խոսքը, պետք է օգտագործել պաստառ, նկար և նման բաներ:Այս մեթոդը օգտագործելիս հիմնվում ենք քերականության

ուսուցման ինդուկցիայի մեթոդի վրա: Սա նշանակում է, որ խոսելու և լսելու ընթացքում որոշվում է, թե քերականական որ կանոնն է կիրառվելու: Սա հիանալի մեթոդ է բանավոր խոսքի զարգացման գործում:Այս մեթոդը ես հաճախ կիրառում եմ

իմ պրակտիկայում, և այն միշտ պսակվում է հաջողությամբ: Լեզուն ուսուցանելու մոտեցումները կարելի է բաժանել փուլերի՝

1. Լուռ վերարտադրման փուլ

Սովորողը առնչվում է նոր բառապաշարի հետ, որոնք հասկանալի են, բայց ոչ կիրառելի:

Այս փուլը ներառում է լուռ ժամանակահատված, երբ սովորողը չի խոսում, սակայն կատարում է լսածը՝ կանգնում է, նստում, փակում, բացում դուռը, ժեստերով «այո» կամ «ոչ» ասում:

2. Վերարտադրման փուլ

Սովորողը գործածում է կարճ բառեր, բառակապակցություններ, պարզ նախադասություններ, կարող է պարզ հարցեր տալ կամ պատասխանել պարզ հարցերի:

3. Խոսքի ի հայտ գալու փուլ

Սովորողը կիրառում է երկխոսություններ, պատասխանելով հարցերին:

4.Միջին հմտության փուլ

Բառապաշարը հարուստ է, կազմում է բարդ նախադասություններ, կարծիքներ հայտնում, մտքեր փոխանակում:

5. Բարձր լեզվական հմտությունների փուլ

Սովորողը, օգտագործելով հարուստ բառապաշար, կարող է մասնակցել քննարկումների:

Մոտեցման հաջորդ ձևը

2. Հաղորդակցման մոտեցումն է:

Սովորողները, այս մոտեցման ձևը կիրառելիս, պատմում են իրենց մասին, լսում մյուսների պատմությունները

Ուսուցիչը հանձնարարում է ուսուցանվող լեզվով հարցազրույց վերցնել ընկերներից և արդյունքների մասին խոսել հաջորդ դասին:

3. Տեխնոլոգիաների վրա հիմնված մոտեցում

Այս պարագայում օգտագործում են հեռախոս կամ համակարգիչ: Այս մոտեցման հիմքում ինտերնետային գրքերը, գրադարանները, տեսահոլովակներն են, ինչպես նաև շփումը սոցիալական ցանցերի միջոցով:

4. Առաջադրանքների վրա հիմնված մոտեցում

Տարբեր առաջադրանքներ կատարելով սովորողները ավելի հեշտ են տիրապետում լեզվին: Այս մեթոդի կիրառման ընթացքում ուսուցիչը առաջադրանք է մշակում և տալիս է սովողներին, դա կարող է լինել փոքրիկ հետազոտություն, բանավեճ կամ հարցում:

Եթե այս մոտեցումները բավարար չեն ուսուցման նպատակին հասնելու ճանապարհին ուսուցիչը կարող է դիմել այլ մեթոդների կամ համատեղել մի քանի մոտեցումներ: Դրանցից է խաղերի, կամ ավելի ճիշտ՝ դերային խաղի մեթոդը

Այս մեթոդը հիմնականում կիրառելի է տարրական դասարաններում: Դերային խաղերը դաստիարակում են կարգապահություն, աշխատասիրություն, փոխօգնության զգացողություն և շատ այլ դրական վարքագծի օրինական կիրառումներ:

Դեռահասները ձգտում են հասուն տարիքի հաղորդակցության: Հենց դերախաղն է նրանց կենտրոնացնում սեփական խոսքի, վարքագծի և ուրիշների վարքագծի վրա: Խաղերի մեծ մասը կապված է կոնկրետ թեմայի հետ: Խաղին հատկացված ժամանակը կախված է մի շարք գործոններից՝ սովորողների պատրաստվածությունից, ուսումնասիրվող նյութի նպատակից, պայմաններից և այլն:

Ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար կարելի է նաև դասարանում հանձնարարել տեքստային աշխատանք: Այն զարգացնում է կարծիք ընթերցված նյութի շուրջը: Բառապաշարի հարստացման գործում օգնում է հոմանիշների և հականիշների օգտագործումը:

Էքսկուրսիաները նույնպես որոշակի գիտելիքներ են զարգացնում:

Սովորողները այցելում են ցուցահանդեր, թանգարաններ, այնտեղ օգտագործելով իրենց բառապաշարը օտար լեզվի բնագավառում: Նրանք կարող են հանդես գալ որպես գիդ կամ ներկայացնել տվյալ պատմական վայրը:

§2

Ցանկացած մեթոդի կամ մոտեցման ընտրության հիմքում ընկած է տվյալ լեզվի քերականությունը:

Անգլերենում մեծ կարևորություն է տրվում բայի քերականական ժամանակաձևերի ուսուցմանը:

Տրված ժամանակաձևով բայի խոնարհումը յուրացնելուց հետո սովորողը փորձում է կազմել նախադասություններ, պատկերացնելով իրավիճակ: Ոչ պակաս կարևոր է նաև սովորողների մոտ ձևավորել այնպիսի հուշարար բառերի օգտագործման հմտություններ, որոնք օգտագործվում են տվյալ ժամանակաձևի հետ:

Օրինակ՝ Present Perfect ժամանակաձևի հետ օգտագործվող հիմնական հուշարար բառերն են՝ already, yet, just և այլն:

Պրակտիկայում հաճախ կիրառվող ուսուցման մեթոդներից են նաև լեզվի իրավիճակային ուսուցումը:

Կցանկանայի նշել, որ այս մեթոդի հետ ես հաճախ առնչվել եմ ուսանողական տարիներից, երբ բառապաշարի ուսուցմն ժամերին կազմում էինք բազմազան իրավիճակային երկխոսություններ կամ մենախոսություններ:

Այս փորձը ինձ հետագայում շատ օգնեց մանկավարժական պրակտիկայում:

Այս մեթոդի կիրառման ժամանակ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքին, որտեղ օգնության է գալիս նոր ուսուցանվող բառապաշարը:

Բանավոր հաղորդակցման ուսուցումը բարդ համակարգ է, որը ներառում է բազմաթիվ լեզվական հմտություններ:

§3

Անգլերենի ուսուցման ժամանակակից մոտեցումներից է՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը:

Վերջին տարիներին հաճախ ենք դիմում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաներին օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Ուսուցիչները պետք է սովորողների համար ստեղծեն համապատասխան միջավայր, որը թույլ կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Անգլերենի դասավանդման ժամանակ ուսուցանվող համակարգչային մեթոդները ապահովում են՝

1) Բառապաշարի ուսուցում
2) Աշխատանք արտասանության հետ
3) Երկխոսության և մենախոսության ուսուցում
4) Գրավոր աշխատանք կատարելու ուսուցում

Այս ամենը թույլ է տալիս սովորողներին լայնացնել իրենց մտահորիզոնը, հարաբերություններ հաստատել և ամրապնդել դրանք անգլալեզու երկրներում սովորող իրենց հասակակիցների հետ: Սովորողները կարող են մասնակցել առցանց անցկացվող թեմաներին, վիկտորինաներին, մրցույթներին:Ուսուցման թվայնացումը անխտիր կապված է այն փաստի հետ, եր համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր:

§4

Անգլերենի ուսուցման մոտեցումները նախնական փուլում (տարրական դասարաններում)

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ընթերցանությունը տեղեկատվություն ստանալու հիմնական միջոցներից է:

Օտար լեզու դասավանդելիս ընթերցանությունը դիտվում է որպես խոսքի զարգացման ինքնուրույն տեսակ: Միևնույն ժամանակ այն իրականացնում է տարբեր գործառույթներ կամ օտար լեեզվի գործնական յուրացման նպատակներ:

Այստեղ շատ կարևոր ՝ ընթերցանության տեխնիկան: Ընթերցանության տեխնիկա ասելով հասկանում ենք ոչ միայն ձայնը և տառի արագ և ճշգրիտ հարաբերակցությունը, այլ նաև հնչյուն-տառ հարաբերակցությունը երեխայի կարդացածի իմաստային կապի հետ:

Այսպիսով, սկզբնական փուլում ընթերցանության տեխնիկայի ձևավորումը և՛ նպատակ է, և՛ ընթերցանության ուսուցման միջոց, քանի որ այն թույլ է տալիս վերահսկել և ամրապնդել արտասանության հիմքը: Ընթերցանությունը բարդ վերլուծական սինթետիկ գործունեություն է, որը բաղկացած է տեքստի ընկալումից ուշադրության կենտրոնացումից, հիշողությունից: Այստեղ ուսուցիչը պետքէ ցուցաբերի ճկուն մոտեցում:

Կարելի է առանձնացնել ընթերցանության մի քանի տեսակներ՝

1-skimming (տեքստի հիմնական թեմայի կամ գաղափարների որոշում)

2-սկանավորում(տեքստի կոնկրետ տեղեկատվության որոնում)

3-մանրամասն ընթերցում (տեքստի մանրամասն ըմբռնում ոչ միայն բովանդակության, այլ նաև իմաստի մակարդակով):

Ուսուցիչը կարող է կիրառել ընթերցանության տեխնիկայի գնահատման պարամետրեր՝

1) Ընթերցանության տեմպը
2) Դադարը
3) Ինտոնացիան
4) Կարդացածի ըմբռնումը

Այս համակարգի զարգացմանը նպաստում է տարբեր վարժությունների կիրառումը: Այստեղ կարևորվում է ուսուցչի մոտեցումը, քանի որ դասարանում կարող են լինել տարբեր մակարդակի սովորողներ:

Ուսուցիչը կարող է օգտագործել նմանատիպ վարժություններ՝

1)բառերի մեջ գտիր տառերի համակցություններ և կարդա ամբողջ բառը

2)կարդա բառերը և որոշիր, թե որ նկարներին են վերաբերում

3)քանի՞ ձայնավոր կա (ինչպես նաև բաղաձայն) բառի մեջ և կարդա վանկերով

4) տեքստում գտիր գոյականներ

5)տեքստը բաժանիր մասերի և վերնագրիր յուրաքանչյուր մասը

6) պատասխանիր հարցերին

7) նշիր գլխավոր հերոսին բնութագրող բառերը

Անգլերենով ընթերցանության ուսուցման մոտեցման գործնթացում ուսուցիչը կարող է բախվել մի շարք խնդիրների հետ: Ուսուցիչը կարող է խուսափել դրանցից, եթե հետևի որոշակի կանոնների՝

1. Ընթերցվող նյութը պետք է հիմնված լինի նոր բառապաշարի վրա
2. Տեքստը պետք է համապատասխանի սովորողների տարիքային հատկանիշներին
3. Պետք է հաշվի առնել տեքստի մեթոդական և կրթական արժեքը
4. Զարգացնել սովորողների ճանաչողական հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, նրանց ներգրավելով տարբեր քաղաքային իրավիճակներում

* * *

Եզրակացություն

Տարբեր մոտեցումներ և մեթոդներ կիրառելով ուսուցիչը ավելի հեշտ կհասնի ուսուցման մակարդակի բարելավման, եթե …

ա) ուսուցիչը լավ է տիրապետում առարկային, որն էլ հենց հարգանք է առաջացնում սովորողների կողմից նրա նկատմամբ

բ) կարողանում է հետաքրքրություն առաջացնել իր առարկայի հանդեպ

գ) սիրում է իր աշխատանքը և տածում է հարգանք յուրաքանչյուչ սովորողի հանդեպ

դ) ունի մանկավարժական պատշաճ տակտ

ե) արտաքին տեսքը, որը օրինակ է ծառայում աշակերտների համար:

Այս ամենը կարելի է ամփոփել հանճարեղ ֆրանցիացի բանաստեղծի խոսքերով՝

Մարդն իրենից հետո թողնում է այն, ինչի հետ կապված են նրա անունը և գործերը, որոնք այդ անունը դարձնում են հիացմունքի, ատելության կամ անտարբերության խորհրդանիշ:

Վալերի Պոլ

Օգտագործված գրականության ցանկ

1. Nunn David- Communicative tasks and the language curriculum
2. N. Mamukyan- On some methods of learning English
3. Չափորոշիչ և ծրագիր- Armedu.am

   Aniedu.am

4.Անգլերենը տարրական դասարանների համար

Ն. Պոպովա-Վոլգոգրադ

5. Վասիլևիչ Ա. Պ. «Երեխաներին անգլերեն ենք սովորեցնում»

Դասի պլան անգլերենից

Դասարան – 6-րդ

Ուսուցչուհի- Կ. Պողոսյան

Դասի թեմա-Focus on school

Դաս- N9

Դասի տևողությունը -45 րոպե

Նպատակները -1) նպաստել սովորողների գիտելիքների ամրապնդմանը դպրոցի

վերաբերյալ

2) Ձևավորել և զարգացնել ինքնուրույն մտքեր արտահայտելու

Հմտություն

Խնդիրները- 1) Մի քանի նախադասության սահմաններում ներկայացնել

ուսուցանվող նյութը

2)Կազմել նախադասություններ նոր բառերով

Վերջնարդյունքներ- թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա թեմային առնչվող

նոր բառապաշարը

բ) արտահայտի սեփական մտքերը իր դպրոցի մասին , զուգահեռներ

անցկացնելով սովորած նյութի հետ

Օգտագործված նյութեր- գրատախտակ, գրքեր, նկարներ, պլակատներ

Դասի ընթացքը- 1) Կազմակերպչական մաս

2) Տնային աշխատանքի ստուգում

3) Հարցերի միջոցով գիտելիքների ստուգում, դասի հարցում

4)Գնահատում

5) Նոր նյութի մատուցում, տնային աշխատանքի հանձնարարում

Անդրադարձ- Հարցերի միջոցով նոր նյութի ամրապնդում:

Աշակերտները պատասխանում են այս հարցերին.՝

Ի՞նչ սովորեցի այս դասին:

- Ի՞նչ հասկացա այս դասին:
- Ի՞նչ ամրապնդեցի այս դասին: